Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Էդիկ Ղահրամանի Զաքնոյանը /ծնված՝ 20.12.1961թ., նույնականացման քարտ՝ 004980355, տրված՝ 03.07.2014թ. 057-ի կողմից, հաշվառված՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, Մուսալեռ բնակավայր, Վ.Մամիկոնյան փողոց, 12 տուն հասցեում/ 30.06.2023 թվականին ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավար Դավիթ Մինասյանին է ներկայացրել նույնանուն համայնքի բյուջեի նկատմամբ ունեցած հարկային պարտավորությունների մասնակի վճարման անդորրագրեր /վճարման անդորրագրեր՝ թիվ 77870678, թիվ 77870399, թիվ 77870098, թիվ 77869828/ և հիմք ընդունելով Էդիկ Զաքնոյանի կողմից 30.06.2023 թվականին ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավար Դավիթ Մինասյանին ներկայացված հարկային պարտավորությունների աստիճանական մարման ժամանակացույց կազմելու վերաբերյալ թիվ 2499 դիմումը՝ որոշում եմ՝

1. Էդիկ Ղահրամանի Զաքնոյանի հետ կնքել հարկային պարտավորությունների աստիճանական մարման ժամանակացույց՝ 6 ամիս ժամկետով՝ համաձայն հավելվածի:
2. Էդիկ Զաքնոյանից գանձել ընդհանուր 93.263 /իննսուներեք հազար երկու հարյուր վաթսուներեք/ ՀՀդրամ՝ որպես Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի բյուջեի նկատմամբ 30.06.2023 թվականիդրությամբ հաշվարկված հողի հարկի գծով հարկային պարտավորության գումար, որից 58.590 /հիսունութ հազար հինգ հարյուր իննսուն/ ՀՀ դրամը՝ որպես ապառք, իսկ 34.673 /երեսունչորս հազար վեց հարյուր յոթանասուներեք/ ՀՀ դրամը՝ որպես տույժ /վճարման հաշվի համար՝ 900325176049/:
3. Սույն որոշմանը կից հավելվածով սահմանված ժամանակացույցի վճարման ժամկետները խախտելու դեպքում Էդիկ Զաքնոյանի նկատմամբ հարուցել վարչական վարույթ:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում որոշման մասին Էդիկ Զաքնոյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023թ.հունիսի 30
գ.Փարաքար

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 405-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ << ՀՈՎԻԿ ԷԴԳԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N 02-Ն հրամանի պահանջներով և հիմք ընդունելով 2023 թվականի հուլիսի 3-ի Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի «Հովիկ էդգարյանի անվան արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի մրցութային հանձնաժողովի ձևավորման նպատակով համակարգչում զետեղված թեկնածուների պատահական ընտրության մասին թիվ 1 արձանագրությունը՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի <<Հովիկ Էդգարյանի անվան արվեստի դպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2023 թվականի հուլիսի 4-ին թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի «Հովիկ Էդգարյանի անվան արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթը անցկացվում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N 02-Ն հրամանի պահանջներին համաձայն:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023 թ. հուլիսի 3
գ.Փարաքար

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ
# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 406-Ա
ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասին պահանջներով, հաշվի առնելով, որ Գրիգորի Մարտիրոսի Ստեփանյանը /ծնված՝ 06.4.1961թ., անձնագիր՝ AR 0324771, տրված՝ 77.06.2017թ. 057-ի կողմից, հաշվառված՝ ՀՀ Արմավիրի մարզ, Փարաքար համայնքի, գ. Փարաքար, Երևանյան 47 տուն հասցեում/ մասնակի կատարել է հարկային պարտավորությունը, ներկայացրել 110000/ մեկ հարյուր տաս հազար/ ՀՀ դրամ գումարի վճարման 77922253 անդորրագիրը /դրամարկղի մուտքի օրդեր/, հիմք ընդունելով Գրիգորի Ստեփանյանի 2023 թվականի հուլիսի 3-ի թիվ 2520 դիմումը. **որոշում եմ՝**

1. Գրիգորի Ստեփանյանի հետ կնքել պարտավորությունների աստիճանական մարման ժամանակացույց՝ 6 ամիս ժամկետով, համաձայն հավելվածի:
2. Գրիգորի Ստեփանյանի նկատմամբ ընդհանուր 259523 /երկու հարյուր հիսունինը հազար հինգ հարյուր քսաներեք/ ՀՀ դրամ՝ 1991թ. արտադրության BMW 5251 մակնիշի, 16UO476 հաշվառման համարանիշի, WBAHD61060BK24495 նույնականացման համարի ավտոմեքենայի համար 03.07.2023թ. դրությամբ 2018-2020թթ. և 2021-2023թթ. համար հաշվարկված փոխադրամիջոցի գույքահարկի գանձման նպատակով հարուցված վարչական վարույթը կասեցնել 2023 թվականի հուլիսի 3-ին կազմված ժամանակացույցի վերջնաժամկետով՝ մինչև 2024 թվականի հունվարի 3-ը:
3. Ժամանակացույցով սահմանված վճարման ժամկետները խախտելու դեպքում վերսկսել վարույթը:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում որոշման մասին Գրիգորի Ստեփանյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

2023թ. հուլիսի 3
գ.Փարաքար

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՀՈՒԼԻՍԻ 2023 թվականի N 407-Ա

## ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱԿՈԲԻ ՊՈՂՈՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, նկատի ունենալով, որ հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով «ԱՐՏ.ԱԼԵՔՍ» ՍՊԸ-ի կողմից 2023 թվականի մարտի 22-ին տրված շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, ՀՀ Արմավիրի մարզպետի 2023թ-ի մայիսի 31-ի N 01/7/00249-2022 գրությունը, ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064 որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2/փ-138 դրական եզրակացությունը, ՀՀ Փարաքար համայնքի ավագանու 2023 թվականի հունիսի 27-ի N 39-Ա որոշումը, ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից 2023 թվականի մարտի 6-ին տրված հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր 2023QDSDUL), սեփականատեր Հովհաննես Հակոբի Պողոսյանի 2023 թվականի ապրիլի 5-ի N 1169 և N 1168 դիմումները. ***որոշում եմ՝***

1. Հովհաննես Հակոբի Պողոսյանին սեփականության իրավունքով պատկանող 04-009-0110-0042 կադաստրային ծածկագրով 0.045 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխել որպես բնակավայրերի նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը բնակելի կառուցապատման հող, համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխությունը 0.045 հա մակերեսով հողամասը հանել գյուղատնտեսական նպատակային նշանակության հաշվեկշռից և ներառել բնակավայրերի, բնակելի կառուցապատման հողերի հաշվեկշռում:

2. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Այգեկ գյուղում գտնվող Հովհաննես Հակոբի Պողոսյանին սեփականության իրավունքով պատկանող 04-009-0110-0042 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված 49,7 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը, համաձայն համապատասխան որակավորում ունեցող անձի՝ «ԿԱՐԵՆ ՄԱՉԱՆՅԱՆ» Ա/Ձ-ի կողմից տրված հողամասի և շինության հատակագծի:

3. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետր բնակելի տան համար կազմում է 1422 դրամ, վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 70 673,40 (յոթանասուն հազար վեց հարյուր յոթանասուներեք դրամ քառասուն լումա) ՀՀ դրամ:

4. Փոփոխվող հողի կադաստրային արժեքների տարբերությունը (1 քառակուսի մետրին վարելահողի համար 1 721,80 դրամ,) 450 քառակուսի մետրի համար կազմում է 774 810 (յոթ հարյուր յոթանասունչորս հազար ութ հարյուր տաս) ՀՀ դրամ, ինչը 60-օրյա ժամկետում պետք է վճարել Փարաքարի համայնքային Այգեկ բնակավայրի բյուջե՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության 900325155159 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը ճանաչել ուժը կորցրած:

5. Հողամասին և շինությանը տրամադրել հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Այգեկ 2 բնակելի տուն (ծածկագիր 040094UYGM6L):

6. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության Փարաքար համայնքի Այգեկ բնակավայրի 900325155175 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

7. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

2023 թ. հուլիսի 06

գ.Փարաքար

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

**Ո Ր Ո Շ Ու Մ**

07 ՀՈՒԼԻՍԻ 2023 թվականի N 408-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՊՏՂՈՒՆՔ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԲԱՐՁՐԱՐԺԵՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 1066-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 2023 թվականի հունիսի 16-ի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին N Կ-16062023-04-0121 որոշումը և քաղաքացի Սամվել Սիրեկանի Խաչատրյանի 2023 թվականի հունիսի 22-ի թիվ 2332/1 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Պտղունք գյուղում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող՝ 04-082-0327-0012-ից կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասից, 0.1313 հա մակերեսով ցածրարժեք՝ այլ հողատեսքը փոխադրել բարձրարժեքի՝ խաղողի այգի:

2. Հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023 թ. հուլիսի 07
գ.Փարաքար

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

07 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 409-Ա

ԴԱՎԻԹ ՍԱՖԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 33-րդ հոդվածի 3-րդ կետով, 34-րդ, 37-րդ, 38-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 134-րդ, 135-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 02-ի թիվ 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 9-րդ կետի 1-ին ենթակետի <<ա>> պարբերությամբ, 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով Նորայր Սաֆարյանի /ծնված՝ 29.12.1971թ., Ն/Ք 007134828, տրված 17.07.2015թ. 031-ի կողմից, ՀԾՀ 3912710171, հաշվառված՝ Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Ներքին Շորժա 1-ին փողոց տուն 1, փաստացի բնակության վայր՝ քաղաք Երևան Հ/Ա Բ 2 թաղամաս 133 շենք բն. 31/ 16.06.2023թ. թիվ 2219 դիմումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի <<Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի>> 2023 թվականի հուլիսի 4-ի թիվ 14-րդ նիստի արձանագրությունը. Որոշում եմ՝

1. Նորայր Սաֆարյանին (ծնված՝ 29.12.1971թ., Ն/Ք 007134828, տրված 17.07.2015թ. 031-ի կողմից, ՀԾՀ 3912710171, հաշվառված՝ Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Ներքին Շորժա 1-ին փողոց տուն 1, փաստացի բնակության վայր՝ քաղաք Երևան Հ/Ա Բ 2 թաղամաս 133 շենք բն. 31) նշանակել խնամակալ՝ ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մերձավան գյուղի Երևանյան խճուղի շենք 63 բնակարան 43/2 հասցեի անչափահաս բնակիչ՝ Դավիթ Արթուրի Սաֆարյանի (ծնված 2016 թվականի մարտի 6-ին ծննդյան վկայական ԱԲ N588866, ՀԾՀ 1623160391) նկատմամբ:
2. Հսկողություն սահմանել Նորայր Թորգոմի Սաֆարյանի գործունեության նկատմամբ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Նորայր Թորգոմի Սաֆարյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023 թ. հուլիսի 7
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ՀՈՒԼԻՍԻ 2023 թվականի N 410-Ա

## ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, հիմք ընդունելով հողամասի բաժանման սխեման տրված 2023 թվականի հունիսի 27-ին «Կարեն Մաչանյան» Ա/Ձ-ի կողմից, հողամասի սեփականատեր՝ Պերճուհի Վարդանյանի 2023 թվականի հունիսի 28-ի դիմումը. ***որոշում եմ՝***

1. Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մուսալեռ գյուղի վարչական սահմաններում գտնվող Պերճուհի Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող 04-069-0042-0003 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի կողմ 1-ին (առանձնացվող հատված 1) 0.0588 հա մակերեսով հողամասին և առկա շինությանը տալ հասցե. ՀՀ Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Մուսալեռ, Սայաթ-Նովա փողոց 6 կիսակառույց:

2. Նույն հողատարածքի՝ կողմ 2-ին (առանձնացվող հատված 2) 0.0342 հա մակերեսով հողամասին տալ հասցե. ՀՀ Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Մուսալեռ, Սայաթ-Նովա փողոց 6/1 հողամաս:

3. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023 թ. հուլիսի 07
գ.Փարաքար

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

## ՈՐՈՇՈՒՄ

07 ՀՈՒԼԻՍԻ 2023Թ. N-411-Ա

## ԱՐՄԱՆ ՀԵՆՐԻԿԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանը քննության առնելով վարչական գործը՝ սեփականության իրավունքով Արման Հենրիկի Միքայելյանին /անձնագիր՝ AS0386774, տրված 08.10.2018թ. 001-ի կողմից, հաշվառված՝ ք. Սպիտակ, Էստոնական 1շ. 3 բն. հասցեում/ պատկանող ՀՀ Արմավիրի մարզի, Փարաքար համայնքի, Փարաքար գյուղի Երևանյան փողոց 146 հասցեում, 04-094-0313-017 0կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողամասում, առանց համապատասխան թույլտվության, ինքնակամ շինարարություն՝ քարե հիմնապատերի և պարսպի կառուցում իրականացնելու համար տուգանք նշանակելու մասին հարցը, պարզեց որ.

Արման Հենրիկի Միքայելյանը խախտելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասով և 154-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները, առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի, իրականացրել է ապօրինի շինարարական աշխատանքներ (այսուհետ՝ ինքնակամ կառույց), որի համար օրենքով սահմանված կարգով նախատեսված է տուգանքի նշանակում, ինչի կապակցությամբ Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Հ. Միքաելյանի 13.06.2023թ. թիվ 14 արձանագրության և 13.06.2023թ. թիվ 2107 զեկուցագրի հիման վրա 2023 թվականի հունիսի 13-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասի և154-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ: Փարաքարի համայնքապետարանի վարչական հանձնաժողովը (այսուհետ հանձնաժողով) հրավիրել և անցկացրել է նիստ, որին չի ներկայացել իրավախախտ Արման Հենրիկի Միքայելյանը:

**Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.**

Փարաքար համայնքի վարչական սահմաններում ապօրինի շինարարությունները կանխարգելելու նպատակով հերթական ուսումնասիրության /շրջայցի/ ժամանակ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի աշխատակիցների կողմից ՀՀ Արմավիրի մարզի, Փարաքար համայնքի, Փարաքար գյուղի Երևանյան փողոց 146 հասցեում, 04-094-0313-0107 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակությանհողամասում ապօրինի շինարարություն կատարելու մասին

13.06.2023թ. կազմված թիվ 14 արձանագրությունը, վարչական հանձնաժողովի 07.07.2023թ. արձանագրությունը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետի 13.06.2023թ. թիվ 2107 զեկուցագիրը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը՝ վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Արման Հենրիկի Միքայելյանի կողմից Փարաքար համայնքի Փարաքար գյուղի 04-094-0313-0170 կադաստրային ծածկագրով, իրեն սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության հողամասում առանց համապատասխան շինարարական թույլտվության կատարվել են շինարարական աշխատանքներ՝ ինքնակամ կառուցվել է քարե հիմնապատեր և պարիսպ, ուստի քննարկվող կառույցը հանդիսանում է ինքնակամ:

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով՝ 2023 թվականի հունիսի 13-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով, Փարաքարի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2023 հուլիսի 7-ին հրավիրվել է վարչական նիստ, որին մասնակցելու նպատակով Արման Հենրիկի Միքայելյանը պատշաճ ծանուցվել է՝ փոստով և <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 29.1 հոդվածի 15-րդ կետով սահմանված կարգով, azdarar.am կայքում հրապարակելու միջոցով /հիմք՝ 2023 թվականի հունիսի 28-ի N 1965 ծանուցումը/: Սակայն իրավախախտ Արման Հենրիկի Միքայելյանը չի ներկայացել վարչական նիստին:

Արդյունքում հանձնաժողովը արձանագրություն է կազմել Ա. Միքայելյանի կողմից ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասի և 154-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով կատարված իրավախախտման վերաբերյալ:

***Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ քաղաքային և գյուղական համայնքների տարածքներում համայնքի ղեկավարը վերահսկում է կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի «ա» կետի համաձայն՝ կառուցապատողները պարտավոր են կառուցապատումն

իրականացնել օրենքով սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան, շինարարության թույլտվության հիման վրա:

Նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ շինարարության թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է կառուցապատողի իրավունքը՝ իրականացնել որոշակի շինարարական գործունեություն, ինչպես նոր կառուցվող կամ վերակառուցվող տարածքում, այնպես էլ գոյություն ունեցող շենքերում և շինություններում:

Տվյալ պարագայում Արման Միքայելյանը առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի և առանց հողամասի նպատակային նշանակությունը փոխելու՝ հողամասը ոչ նպատակային նշանակության օգտագործելով, իրեն սեփականության իրավունքով պատկանող՝ Փարաքար համայնքի Փարաքար գյուղի 04-094-0313-0170 կադաստրային ծածկագրով հողամասում իրականացրել է ապօրինի շինարարական աշխատանքներ՝ քարե հիմնապարերի և պարսպի կառուցում:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հողամասերը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելը՝առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով.

154-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասերով նշված արարքները գյուղական բնակավայրերում իրականացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:
տավարձի հարյուրապատիկի չափով»:

ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 35-րդ հոդվածի համաձայն՝ մեկ անձի կողմից երկու կամ ավելի վարչական իրավախախտումներ կատարելու դեպքում վարչական տույժը նշանակվում է յուրաքանչյուր իրավախախտման համար առանձին-առանձին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 35-րդ հոդվածով, 54-րդ հոդվածի 1-ին մասով, 154-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 44-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասի և 23-րդ հոդվածի 1-ին մասով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝ և հիմք ընդունելով Փարաքարի համայնքապետարանի վարչական հանձնաժողովի 07.07.2023թ. արձանագրությունը և Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետի կողմից 13.07.2023թ. թիվ 21076 զեկուցագիրը.ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Իրավախախտ Արման Միքայելյանի նկատմամբ նշանակել տուգանք՝ իրեն սեփականության իրավունքով պատկանող՝ ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղի 04-094-0313-017 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողամասում ապօրինի շինարարական աշխատանքներ՝ քարե հիմնպատերի և պարսպի կառուցելու համար՝ 100.000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով, հողամասը ոչ նպատակային նշանակության օգտագործելու համար՝ 100.000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով:

1) Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ խախտողի կողմից տուգանքը պետք է վճարվի տուգանք նշանակելու մասին որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում՝ ֆինանսների նախարարության 900325191030 հաշվեհամարին՝ ստացող Փարաքար համայնք:

2. Առաջարկել իրավախախտող Արման Հենրիկի Միքայելյանին սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 15 օրյա ժամկետում վերացնել իրավախախտման հետևանքները:

3. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ և Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Իրավախախտ Արման Հենրիկի Միքայելյանին նախազգուշացնել, որ համայնքի ղեկավարի որոշմամբ տուգանք նշանակվելուց հետո, եթե շարունակվի իրականացվել ինքնակամ կառույցի շինարարական աշխատանքները, ապա համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ կետի՝ կնշանակվի տուգանք, սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից երկուհազարհինգհարյուրապատիկի չափով:

5. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի վրա:

6. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և/ կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրապարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

2023թ. հուլիսի 7
գ.Փարաքար